ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 0685
02 MAR 2022
Կից ✓ Նշում

«01» մարտի 2022թ. №844-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103016522 առ 11.02.2022.թ փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 6 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

28.02.2022

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2022 թվականի մարտ « 01 » - ի No 844– Ա հրամանի

Գրանցված դեղերի ցանկ

| հ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավո-րումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողն-ման կար-գավի-ճակը | եզրակացու թյան համար և ամսաթիվ | Գրանցման ընթացակարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ռովաստատ Դուո | ռոզուվաստատին (ռոզուվաստատին կալցիում), էզետիմիբ | դեղահատեր | 10մգ+10մգ; (30/3x10/) բլիստերում | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջոզեֆա Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե` | Լեհաստան | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 6Ա, Պիենկով, Մարիանա Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով | Լեհաստան | Դ | 20467 11.02.2022 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 2. | ՑԵՆՄԵՏՐԻՆ ՓՈՈԻՐ-ՕՆ | դելտամետրին | կիթ | 7,5մգ/մլ, 500մլ պլաստիկե շշիկ,1մլ պլաստիկե շշիկ, 2,5լ պլաստիկե շշիկ | ՑԵՆԱՎԻՍԱ, Ս.Լ., Կամի Պեդրա Էստելա ս/ն, Ռեուս, Տարագոնա, 43205 | Իսպանիա | ՑԵՆԱՎԻՍԱ, Ս.Լ., Կամի Պեդրա Էստելա ս/ն, Ռեուս, Տարագոնա, 43205 | Իսպանիա | Դ | 20468 11.02.2022 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 3. | Թիոկտացիդ 600 ՀՌ | ալֆա-լիպոյաթթու | դեղահատեր թաղանթապատ | 600մգ; (30) ապակե տարայում, (100) ապակե տարայում | Ռոտտաֆարմ ՍՊԸ, Դամաստաուն Ինդաստրիալ Պարկ, Մուլհուդարտ, Դուբլին 15 | Իռլանդիա | ՄԵԴԱ Ֆարմա ԳմբՀ & Քո. ԿԳ, Բենզշտրասե 1, 61352 Բադ Հոմբուրգ | Գերմանիա | Դ | 20469 11.02.2022 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 4. | Կարնիլեվ | լևոկարնիտին | լուծույթ ներարկման | 1գ/5մլ; (5/1x5/) ամպուլներ 5մլ պլաստիկե տարայում | Հելփ Ս.Ա. Պեդինի Իոանինոն, Իոանինա, 45500 | Հունաստան | Սպեյ Մեդիքըլ ՍՊԸ, Լինթըն Հաուս 7-12 Թեվիսթոք հրապարակ, Լոնդոն, Վ3Հ 9ԼՏ | Միացյալ Թագավորություն | Դ | 20470 11.02.2022 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 5. | Ֆաստենալ | կետոպրոֆեն լիզինի աղ | դեղափոշի ներքին ընդունման լուծույթի | 80մգ; 30-ական երկփաթեթիկներ 2գ | Սպեշլ Պրոդակտս Լայն Ս.պ.Ա., Վիա Ֆրատտա Ռոտոնդա Վադո Լարգո, 1-03012 Անագնի (ՖՌ) | Իտալիա | ՈւԱԲ "ՄՌԱ", Տոտորյու փ. 20-9, ԼՏ-01121 Վիլնյուս | Լիտվայի Հանրապետություն | Դ | 20471 11.02.2022 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6. | Միկոդերիլ | Նաֆտիֆին հիդրոքլորիդ | լուծույթ արտաքին կիրառման | 10մգ/գ; 10մլ շշիկ կաթոցիկ, 20մլ շշիկ կաթոցիկ | Ֆարմստանդարտ -Լեկսրեդստվա ԲԲԸ, 305022, Կուրսկ, Ագրեգատնայա 2րդ փ., 1ա/18 | Ռուսաս-տան | "ՕՏՍՖարմ" ԲԸ, Տեստովսկայա փ, II-րդ մասնաշենք,12-րդ հարկ, տուն 10, 29 սենյակ, Մոսկվա 123112 | Ռուսաս-տան | ԱԴ | 20472 11.02.2022 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |